ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/8Շ

ք. Երևան **«06» սեպտեմբերի 2019թ.**

ՀՀ տարացքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինող Հ. Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքների (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 100 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 3 տարի: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 4):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 759 000 000 (յոթ հարյուր հիսունինը միլիոն) ՀՀ դրամ, որից 126 500 000 (մեկ հարյուր քսանվեց միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Վճարումը կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում Կողմերի միջև համաձայնագիր կնքելու միջոցով:
Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[30] .

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ-ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

---

[30] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պատվիրատուն պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[32]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[33]

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները,

---

[32] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

[33] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով:*

դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքայի կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3, ՀՀ կենտրոնական գանձապետարան ՀՎՀՀ 02578338 Հ/Հ 900011025823	«ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ Արարատի մարզ, գ. Ավշար «Ինեկոբանկ» ՓԲԸ, Կորյուն մ/ճ Հ/Հ 205002202385 ՀՎՀՀ 04102505
/ստորագրություն/ Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ

Հավելված թիվ 1
«06» սեպտեմբերի 2019թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/8Շ ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ129+100-կմ135+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքների

/ՀՀ հազ. դրամ/

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ.	Ծավալը	Միավորի արժեքը *	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
	I Հողային աշխատանքներ				
1	Քայքայված ճան. հագուստի քանդում 0.65մ3 էքս. բարձում տեղափոխում 7կմ լցակույտ:	մ³	705.6	2.363	1 667.333
2	Նույնը՝ ձեռքի աշխատանքով:	մ³	35.6	7.307	260.129
3	10eIV կարգի բնահողի մշակում ավտոգրեյդերով, տեղափոխում մինչև 10մ կուտակումով, բարձում 0.65մ³ էքս. տեղափոխում 7կմ լցակույտ:	մ³	73.9	2.297	169.748
4	Նույնը՝ ձեռքի աշխատանքով:	մ³	8.2	7.307	59.917
5	Պահուստից 10eIV կարգի բնահողի մշակում էքս. 1.0մ³ բարձում, տեղափոխում 5կմ լիցքի իրականացման համար, հարթում, ջրում, խտացում:	մ³	162.0	2.748	445.176
	II Կողային առուներ				0.000
1	Կողային առուների իրականացում (10eIV) կարգի բնահողում 0.65մ3 էքս. բարձում, տեղափոխում 7կմ լցակույտ:	մ³	137.0	2.363	323.731
3	Նույնը՝ ձեռքի աշխատանքով	մ³	14.2	7.307	103.759
	III Ճանապարհային հագուստ				0.000
1	Գոյություն ունեցող ա/բ ծածկի ֆրեզում $h_{միջ}$=5սմ, վերադարձ սեփականատիրոջը:	մ²	78099.529	0.855	66 775.097
2	Փոսային նորոգում (h=3-5սմ):	մ²	953	5.415	5 160.495
3	Փոսային նորոգում հիմքով. - խճային հիմք (h=8-16սմ) բիտումի տարածումով - խոշորահատիկ ա/բ h=6սմ	մ²	145	11.099	1 609.355
4	Հարթեցնող շերտ մ/հ ա/բ $h_{միջ}$=3սմ	տ	1853.68	48.78	90 422.510
5	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ²	2169.41	0.584	1 266.935
6	Խճային հիմք h=15սմ բիտումի տարածումով 4.12տ/1000մ²	մ²	2169.41	3.651	7 920.516
7	Խոշորահատիկ ա/բ h=6սմ	մ²	2169.41	6.354	13 784.431
8	Մանրահատիկ ա/բ h=4սմ	մ²	2169.41	4.714	10 226.599
9	Մանրահատիկ ա/բ h=5սմ	մ²	87644.529	5.808	509 039.424
10	Արհեստական անհարթությունների կառուցում $h_{միջ}$=7սմ	մ²	277.12	6.62	1 834.534
	IV Կողնակներ				0.000
1	Կողնակների հարթեցում ավտոգրեյդերով:	մ²	2590.0	0.019	49.210
2	Կողնակների ամրացում ավազակոպիճով h=5սմ:	մ²	4580	0.466	2 134.280
	V Իջատեղեր				0.000
1	10eIV կարգի բնահողի մշակում 0.65մ3 էքս., բարձում ա/ի, տեղափոխում 7մ լցակույտ:	մ³	151	2.363	356.813
2	Նույնը՝ ձեռքի աշխատանքով:	մ³	16.56	7.307	121.004
3	Հողային պատառի հարթեցում ավտոգրեյդերով:	մ²	904	0.019	17.176

4	Նույնը՝ ձեռքի աշխատանքով:	մ²	90	0.346	31.140
5	Խճային հիմքի տեղադրում h=12սմ բիտումի տարածումով 4.12տ/1000մ²:	մ²	994.0	3.248	3 228.512
6	Փոսային նորոգում h=3-5սմ	մ²	16.0	5.265	84.240
7	Փոսային նորոգում հիմքով. - խճային հիմք (h=8-16սմ) բիտումի տարածումով 4.12տ/1000մ²	մ²	30.0	3.782	113.460
8	Մանրահատիկ ա/բ h=4սմ:	մ²	1358.74	4.665	6 338.522
9	Խողովակների համար խրամուղու կառուցում 10eIV բնահողում 0.65մ³ էքս. բարձում ա/ի տեղափոխում 7կմ լցակույտ:	մ³	11.31	2.363	26.726
10	Նույնը՝ տեղում կուտակումով՝ հետլիցքի համար:	մ³	13.65	0.728	9.937
11	Ավազակոպճային շերտի տեղադրում h=10սմ	մ³	2.53	6.131	15.511
12	Մետ. D=530մմ խող. տեղադրում:	գծմ	39	104.188	4 063.332
13	Գլխամասի կառուցում միաձույլ բետոնով B20	մ³	3.84	116.36	446.822
14	Ջրամեկուսացում				0.000
	- խողովակի	գծմ	36.0	3.025	108.900
	- բետոն	մ²	21.4	1.253	26.814
15	Հետադարձ լիցք ավտոգրեյդերով:	մ³	12.35	0.854	10.547
16	Նույնը՝ ձեռքի աշխատանքով:	մ³	1.3	1.739	2.261
	VI Բետոնյա վաքեր				0.000
	Գոյություն ունեցող բետոնյա վաքերի մաքրում ձեռքի աշխատանքով, բարձում ա/ի տեղափոխում 7կմ լցակույտ:	մ³	145.30	7.141	1 037.587
	VII Ջրընդունիչ վաք՝ մետ. ցանցով				0.000
1	Ա/բ ծածկի քանդում ձեռքի աշխատանքով հետահար մուրճով, բարձում ձեռքով ա/ի, տեղափոխում 7կմ լցակույտ	մ³	7.49	8.168	61.178
2	Փոսորակի փորում 10eIV բնահողում 0.65մ³ էքս. կողքի կուտակումով:	մ³	53.31	0.728	38.810
3	Ավազակոպճային շերտի տեղադրում h=10սմ	մ³	7.52	6.131	46.105
4	Միաձույլ ե/բ վաքեր B20 - ամրան Ø14A500C 662.4գծմ/0.8տ	մ³	27.84	133.225	3 708.984
5	Քսվածքային ջրամեկուսացում	մ²	96.0	1.253	120.288
6	Հետադարձ լիցք ձեռքով	մ³	12.8	1.739	22.259
7	Ավելացած գրունտի բարձում 0.65մ3 էքս., տեղափոխում լցակույտ 7կմ:	մ³	40.51	2.163	87.623
8	Մետ. ցանց ∟100x10 - 160գծմ/2.416տ ∟90x9 - 160գծմ / 1.952տ ∟90x9 - 83.2 գծմ / 1.015 տ Ø25A500C - 460.8 գծմ / 1.775 տ	տ	7.158	906.37	6 487.796
	VIII Գոյություն ունեցող ջրընդունիչ վաքեր				0.000
1	Վաքերի մաքրում ձեռքի աշխատանքով, բարձում ա/ի, տեղափոխում 7կմ լցակույտ:	մ³	58.22	7.141	415.749
2	Մետ. N10 շվելերի (ցանց) ապամոնտաժում, վերադարձ սեփականատիրոջը (մաշված):	տ	0.96	55.431	53.214
3	N10 շվելերով նմանատիպ ցանցի պատրաստում և տեղադրում:	տ	1.10639	982.099	1 086.585
4	Նոր թուջե ցանցերի տեղադրում (68x68)սմ	հատ	15	126.697	1 900.455
	IX Հենապատեր				0.000
1	Հենապատի վերին մասում բնահողի մաքրում ձեռքով, բարձում ա/ի, տեղափոխում 7կմ լցակույտ:	մ³	1.51	7.127	10.762
2	Հենապատի "Մուշտակ" շարի վերականգնում:	մ²	218	22.51	4 907.180

3	Բազալտե թասակի տեղադրում				0.000
	- 15 x 30սմ	գծմ	43.0	13.893	597.399
	- 10 x 30սմ	գծմ	57.0	10.694	609.558
	X Արգելափակոցներ				0.000
1	Նոր մետ. արգելափակոցների տեղադրում	գծմ	152.0	24.233	3 683.416
2	Գոյություն ունեցող մետաղական արգելափակոցի ներկում - թիթեղ:	մ²	190	0.939	178.410
3	Ե/բ սյուների ներկում:	մ²	72.7	0.731	53.144
4	Ե/բ սյուների ապամոնտաժում, վերադարձ սեփականատիրոջը:	հատ	72.0	4.265	307.080
5	Նոր ազդանշանային C1 տիպի պլաստիկ սյուների տեղադրում:	հատ	45	6.054	272.430
6	Գոյություն ունեցող մետաղական բազրիքների ներկում:	մ²	954.0	1.384	1 320.336
7	Բետոնյա արգելափակոցների ներկում:	մ²	620.0	0.731	453.220
	XI Մետ. Բազրիքներ				0.000
1	10eIV բնահողի քանդում ձեռքի աշխատանքով, բարձում, տեղափոխում 7կմ լցակույտ:	մ³	19.6	7.307	143.217
2	Մետ. բազրիքների տեղադրում	գծմ	499.8	13.225	6 609.855
	ուղղանկյուն խողովակ 60x30x3	գծմ/կգ	950.64/3640.95		
	ուղղանկյուն խողովակ 60x40x3	գծմ/կգ	624.24/2684.23		
	ուղղանկյուն խողովակ 40x30x3	գծմ/կգ	749.5/2166.04		
	ուղղանկյուն խողովակ 70x40x4	գծմ/կգ	20.4/126.27		
3	Բետոնե B20 բարձիկ	մ³	19.56	75.64	1 479.518
4	Բետոնե հենապատի վրա ուղղահայաց անցքերի բացում d=80մմ l=45սմ:	հատ	27.0	2.955	79.785
	XII Դիտահորեր և անձրևահորեր				0.000
1	Անձրևահորերի մաքրում ձեռքի աշխատանքով, բարձում ա/ի, տեղափոխում 7կմ լցակույտ:	մ³	3.4	7.141	24.279
2	Դիտահորերի բարձրացում բետոն B20	հատ	7	13.561	94.927
3	Դիտահորի մաքրում ձեռքով, տեղափոխում 7կմ լցակույտ:	մ³	0.6	7.141	4.285
4	Նոր ե/բ սալ (1.2x1.2)	հատ	1	235.148	235.148
5	Դիտահորերի իջեցում բետոն B20	հատ	2	6.226	12.452
	XIII Գծանշում				0.000
1	Հոծ գիծ 1.1 - 1286 գծմ /128.6 մ² 1.2.1 - 280 գծմ / 28 մ²	մ²	156.6	0.495	77.517
2	Ընդհատ գիծ 1.5 (1:3) - 3922 գծմ / 98.05 մ² 1.8 (1:3) - 96 գծմ / 2.4 մ²	մ²	100.45	1.376	138.219
3	Ընդհատ գիծ 1.6 3:1	մ²	73.5	0.593	43.586
4	Ընդհատ գիծ 1.7 1:1	մ²	2.8	0.789	2.209
5	Գծանշում 1.14.1 - 345.4 1.25 - 72.0 1.16.1 (2) - 14.94	մ²	432.34	1.127	487.247
	XIV Մայթեր				0.000
1	Մայթերի ծածկի ա/բ քանդում 0.65մ³ էքս., բարձում, տեղափոխում 7կմ լցակույտ:	մ³	319.95	2.614	836.349
2	Նույնը՝ ձեռքի աշխատանքով:	մ³	3.2	5.168	16.538
3	Մայթերի բետոնե ծածկի քանդում 0.65մ³ էքս., բարձում, տեղափոխում 7կմ լցակույտ:	մ³	5.04	2.614	13.175
4	Նույնը՝ ձեռքի աշխատանքով:	մ³	0.53	7.696	4.079

5	Բետոնե (08x1.0x0.06) սալերի ապամոնտաժում 0.65մ³ էքս., բարձում, տեղափոխում 7կմ լցակույտ:	մ³	1.32	2.686	3.546
6	Մայթերի վրա կուտակված բնահողի բարձում 0.65մ³ էքս., տեղափոխում 7կմ լցակույտ:	մ³	116	2.055	238.380
7	Նույնը՝ ձեռքի աշխատանքով:	մ³	12.5	4.936	61.700
8	Բազ. ե/ք ապամոնտաժում ձեռքի աշխատանքով՝ տեղում կուտակելով հետագա օգտագործման համար:	գծմ	286	1.152	329.472
9	Բետոնե եզրաքարի ապամոնտաժում վերադարձ սեփականատիրոջը:	գծմ	47.0	1.152	54.144
10	Ե/ք տեղադրման համար փոսորակի մաքրում ձեռքի աշխատանքով, բարձում, տեղափոխում 7կմ լցակույտ:	մ³	19.46	7.307	142.194
11	Նոր բազալտե եզրաքարերի տեղադրում բետոնե B20 հիմքի վրա 100գծմ 3.5մ³ բետոնե:	գծմ	326.0	12.504	4 076.304
12	Նույնը՝ նախօրոք օգտագործած:	գծմ	200.0	3.386	677.200
13	Միաձույլ բետոնե B20 եզրաշարի իրականացում (10x20սմ):	մ³	23.3	71.983	1 677.204
14	Միաձույլ բետոնե B20 եզրաշարի իրականացում (15x30սմ):	մ³	1.58	71.755	113.373
15	10x20 բազ. ե/ք տեղադրման համար ծառաբներում 10eIV բնահողի քանդում ձեռքով, կողքի կուտակումով:	մ³	1.44	5.079	7.314
16	10x20 բազ. ե/ք տեղադրում 100գծմ 3մ³ բետոն B15	գծմ	36	7.927	285.372
17	Կուտակած բնահողի ցրում տեղում	մ³	1.44	1.738	2.503
18	Ավազակոպճային շերտ $h_{միջ}$=5սմ	մ³	548.5	5.57	3 055.145
19	Ավազակոպճային շերտ h=12սմ	մ³	76.4	5.57	425.548
20	Մայթի բետոնե սալերի տեղադրում (0.8x1.0x0.06)	մ²	30	21.13	633.900
21	Ավազային ա/բ h=3սմ	մ²	11576.0	3.785	43 815.160
22	Ապամոնտաժված ոչ պիտանի բազալե եզրաքաերի բարձում 0.65մ³ էքս., տեղափոխում 7կմ լցակույտ:	մ³	3.9	2.686	10.395
	XV Խողովակներ				0.000
1	Հունի մաքրում ելքում 10eIV, ձեռքի աշխատանքով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 7 կմ	մ³	5.5	7.307	40.189
2	Մաքրում խողովակի ներսում ձեռքի աշխատանքով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 7 կմ	մ³	12.0	7.307	87.684
3	Գլխամասի իրանի կառուցում B20 միաձույլ բետոնով	մ³	1.44	116.36	167.558
4	Գլխամասի թևերի կառուցում B20 միաձույլ բետոնով	մ³	1.28	71.983	92.138
5	Գլխամասի իրանի և թևերի ջրամեկուսացում	մ²	8.5	1.253	10.651
6	Վաքի և հենակային ատամի B20 միաձույլ բետոնով	մ³	1.09	86.62	94.416
7	Գլխադիրի կառուցում B20 բետոնով	մ³	0.96	71.983	69.104
	XVI Խողովակներ				0.000
	D 720 մմ խողովակ				0.000
1	Ա/բ ծածկի քանդում ձեռքով բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 7 կմ հեռավորության վրա:	մ³	3.02	8.155	24.628
2	Խողովակի տեղադրման համար փոսորակի իրականացում հողային պաստառի քանդում էքս. 0.65 շտ, կողքի կուտակումով - 10eIV:	մ³	123.68	0.728	90.039
3	Նույնը՝ ձեռքով:	մ³	13.0	5.079	66.027
4	Միաձույլ եզրաշարի ապամոնտաժում բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 7 կմ հեռ վրա:	մ³	0.04	28.968	1.159
5	Բազալտե եզրաքարի ապամոնտաժում հետագա տեղադրումով հիմքի բետոն - 100 գմ-ին 3.5 մ³, B15:	գմ	2.0	4.538	9.076
6	Գոյություն ունեցող պատի միաձույլ բետոնի քանդում ձեռքով բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 7 կմ հեռավորության վրա:	մ³	2.86	29.309	83.824

7	Բազալտե երեսապատման քարերի ապամոնտաժում կողքի կուտակումով «մուշտակի տակ»:	մ²	5.6	7.381	41.334
8	Ձեռքով համահարթեցման աշխատանքներ:	մ²	37.6	0.346	13.010
9	Խողովակի տեղադրման համար խճային բարձիկի իրականացում	մ³	15.36	5.498	84.449
10	D=720 մմ պողպատե խողովակի տեղադրում - d=8 մմ:	գմ	23	161.58	3 716.340
11	Մետաղական խողովակի գրունտի հետ շփվող մակերևույթների քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով:	գծմ	22.0	3.025	66.550
12	Հենապատի վերականգնում միաձույլ բետոնով B20	մ³	2.6	71.983	187.156
13	Հենապատի քսվածքային երկշերտ ջրամեկուսացում:	մ²	5.2	1.253	6.516
14	Հետլիցք բուլդոզերով ջրումով և շերտ շերտ տոփանումով:	մ³	96.75	0.854	82.625
15	Նույնը՝ ձեռքով	մ³	9.5	1.739	16.521
16	Ավելնորդ գրունտի բարձում ա/ի 0.65 մ³ շերեփ էքս. 10eIV, տեղափոխում լցակույտ 7 կմ հեռ վրա:	մ³	30.43	2.163	65.820
17	Եզրաշարի վերականգնում B20 դասի միաձույլ բետոնով:	մ³	0.04	71.983	2.879
18	Բազալտե երեսապատման վերականգնում կողքի պահեստավորված քարերով՝ «մուշտակի տակ»:	մ²	5.19	10.992	57.048
19	Սիզամարգի լրալցում սնահողով h=10սմ:	մ³	0.4	13.798	5.519
20	Մայթի ավազակոպճային շերտի տեղադրում h=12սմ	մ³	0.48	5.57	2.674
	Ջրհորի իրականացում				0.000
1	Անձրևահորի իրականացման համար փոսորակների փորման հողային աշխատանքներ 0.65 մ³ շերեփ էքս. 10eIV:	մ³	3.6	0.728	2.621
2	Նույնը ձեռքի աշխատանքով կողքի կուտակումով:	մ³	0.4	5.079	2.032
3	Ջրհորի տակ h=10 սմ ավազակոպճային շերտի տեղադրում:	մ³	0.14	6.131	0.858
4	Ջրհորի իրականացում B20 դասի միաձույլ բետոնով, ամրան & 14մմ A500c - L=10.92 մ P=13.2 կգ:	մ³	1.64	91.015	149.265
5	Կափարիչի (ցանցի) իրականացում այդ թվում. ∟100x10 L=2.0 մ P=30.2 կգ, ∟90x9 L=3.04 մ P=37.09 կգ, &25 A500c L=14 մ P=22.19 կգ,	տ	0.0895	906.19	81.104
6	Գրունտի հետ շփվող մակերևույթների քսվածքային ջրամեկուսացում (2 շերտ):	մ²	6.65	1.253	8.332
7	Հետլիցք ձեռքով՝ ջրումով և շերտ շերտ տոփանումով:	մ³	2.18	1.739	3.791
8	Ավելնորդ գրունտի բարձում ա/ի 0.65 մ³ շերեփ էքս. 10eIV, տեղափոխում լցակույտ 7 կմ հեռ վրա:	մ³	1.82	2.163	3.937
	Ջրընդունիչ				0.000
1	Փոսորակի փորում 10eIV կարգի բնահողում էքս.0,65մ³ շ.տ. կողքի կուտակումով:	մ³	3.0	0.728	2.184
2	Նույնը՝ ձեռքով	մ³	0.8	5.079	4.063
3	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ³	0.47	6.131	2.882
4	Միաձույլ ե/բ ջրընդունիչ վաք (բետոն B-20) ամրան & 14մմ A500c - 50.01 կգ:	մ³	1.74	133.228	231.817
5	Ցանցի իրականացում ամրան & 25մմ A500c - L=28.8 մ, P=110.97 կգ Անկյունակ L 100x10մմ - L=10 մ, P= 151.0 կգ Անկյունակ L 90x9մմ - L=15.2 մ, P=185.44 կգ	կգ	447.41	0.906	405.353
6	Քսվածքային ջրամեկուսացում	մ²	6.0	1.253	7.518
7	Հետլիցք ձեռքով	մ³	0.80	1.739	1.391

8	Ավելացած գրունտի բարձում ա/ի էքս. 0.65 մ³ շ.տ. տեղափոխում լցակույտ 7 կմ հեռ. վրա:	Ն³	3.0	2.163	6.489
	Ջրհոր և մետաղական խողովակ				0.000
1	Մետաղական կոնստրուկցիաների ապամոնտաժում, վերադարձ սեփականատիրոջը	կգ	850	0.055	46.750
2	10eIV կարգի բնահողի մշակում ձեռքով՝ կողքի կուտակումով	մ³	1.6	5.079	8.126
3	Խճային հիմք h=10սմ	մ³	0.3	5.498	1.649
4	Միաձույլ բետոն B20 - հատակ - 0.6 մ³ - պատեր - 1.58 մ³	մ³	2.18	87.461	190.665
5	Ջրհորի ջրամեկուսացում	մ²	6.31	1.253	7.906
6	Մետաղական d=530մմ խողովակի տեղադրում	գծ.մ	14	104.19	1 458.660
7	Խողովակի միացում գործող վաքին 2 տեղ միաձույլ բետոն B20 բետոն(0.116x2)	մ³	0.23	116.36	26.763
8	Միացման վաքի ջրամեկուսացում	մ²	1.13	1.253	1.416
9	d=530մմ խողովակի ջրամեկուսացում	գծ.մ	13.5	3.025	40.838
10	Ջրհորի պատերի վրա 4 տեղ մետաղական պատյանի տեղադրում d=108մմ d=3մմ	գծ.մ	1	7.416	7.416
11	Պահուստից 10eIV կարգի բնահողի բարձում էքս.1.0մ³ շ.տ. ա/ի և տեղափոխում 5կմ լիցք իրականացնելու համար, ջրում, խտացում	մ³	12	2.775	33.300
12	Ե/բ սալի թուջե ցանց(68x68), թուջե դիտանցքով (1.5x1.4)	կոմպլեկտ	1	147.65	147.650
	XVII Կամուրջներ				
	Ե/բ կամուրջ կմ 133+560-ում				
1	Բազրիքատակ պատվանդանի քայքայված միաձույլ բետոնի կազմատում ձեռքով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 7կմ հեռ. վրա:	մ³	4.94	34.762	171.724
2	Մայթերի քայքայված ա/բ կազմատում ձեռքով , բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 7կմ հեռ. վրա h=3 սմ:	մ²	156	0.174	27.144
3	Կամրջային պաստառի և կցորդման տեղամասերի ֆրեզում 5 սմ հաստությամբ վերաարձ սեփականատիրոջը:	մ²	1746	0.855	1 492.830
4	Հենարանների կանգնակների վերանորոգում M200 մակնիշի ցեմ շաղախով, b=5 սմ:	մ²	49.2	3.625	178.350
5	Հենարանների ռիգելների միավորման տեղամասերում պաշտպանիչ բետոնի վերականգնում M200 մակնիշի ցեմ շաղախով, b=5 սմ:	մ²	13.5	3.74	50.490
6	Բազրիքատակ պատվանդանի վերականգնում B20 դասի միաձույլ բետոնով L=22.9 մ, b=0.3 մ:	մ³	4.94	71.14	351.432
7	Պարապետների բազալտե թասակների վերականգնում համանման գոյություն ունեցողի - b=4 (L=22.9 մ):	մ²	6.9	28.211	194.656
8	Պարապետների բազալտե երեսապատման վերականգնում համանման գոյություն ունեցողի - b=2 սմ:	մ²	0.8	29.16	23.328
9	Մայթերի սահմաններում հարթեցնող ավազակոպճային շերտի տեղադրում հմիջ.=5սմ:	մ3	7.8	5.832	45.490
10	Մայթերի սահմաններում ավազային ա/բետոնի տեղադրում հմիջ.=3.5սմ:	մ²	156	4.441	692.796
11	Ողողատե բազրիքների երկշերտ ներկում:	մ²	108.0	1.586	171.288

12	Կամրջային պաստառի և կցորդման ֆրեզված տեղամասերի վրա մանրահատիկ ա/բետոնի տեղադրում h=5 սմ հաստությամբ:	մ²	1746.0	5.808	10 140.768
13	Անվահիչների ուղղահայաց գծանշում:	մ²	75.4	0.792	59.717
14	Անվտանգության գոտիների հորիզոնական գծանշում - հոծ:	գմ	116.0	0.055	6.380
				Ընդամենը	843 301.805

*Միավորի գինը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» ՝ 11% և ԱԱՀ-ն՝ 20%

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքայի կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
Հ/Հ 900011025823

/ստորագրություն/
Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ
Արարատի մարզ, գ. Ավշար
«Ինեկոբանկ» ՓԲԸ, Կորյուն մ/ճ
Հ/Հ 205002202385
ՀՎՀՀ 04102505

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 2
«06» սեպտեմբերի 2019թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/8Շ ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ129+100-կմ135+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքների կատարման

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		սկիզբը	ավարտը
0	Լաբորատոր փորձարկումներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 100 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
1	Հողային աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 40 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
2	Կողային առուներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 60 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
3	Ճանապարհային հագուստ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 90 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
4	Կողնակներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 90 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
5	Իջատեղեր	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 90 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
6	Ջրահեռացման վաքեր և ջրընդունիչներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 60 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
7	Մայթեր	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 65 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
8	Խողովակներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 45 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
9	Ե/բ կամուրջ (կմ133+560-ում)	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 75 օր հետո, բայց ոչ

			ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
10	Անվտանգության էլեմենտներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 100 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ		**Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո**	**Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 100 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքայի կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338

Հ/Հ 900011025823

/ստորագրություն/
Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ
Արարատի մարզ, գ. Ավշար
«Ինեկոբանկ» ՓԲԸ, Կորյուն մ/ճ
Հ/Հ 205002202385
ՀՎՀՀ 04102505

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 4
«____» _____ 2019թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/8Շ ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«____» _____ 2019թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/8Շ ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1

06.09.2019թ. կնքված N ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/8Շ պետական գնման պայմանագրի

ք. Երևան **<< 16>> հոկտեմբերի 2019թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինող Հ. Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ՀՀ կառավարության 2019թ. սեպտեմբերի 12-ի թիվ 1184-Ն և 1209-Ա որոշումների և հիմք ընդունելով Կողմերի միջև 06.09.2019թ. կնքված N ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/8Շ պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին.

1.1 Հաստատել Համաձայնագրի 2019թ. Վճարման ժամանակացույցը համաձայն հավելված 1-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքային կառավարման և	«ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ
ենթակառուցվածքների նախարարություն	Արարատի մարզ, գյուղ Ավշար
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,	«Ինեկոբանկ» ՓԲԸ «Կորյուն» մ/ճ
ՀՀ կենտրոնական գանձապետարան	ՀՎՀՀ 04102505
ՀՎՀՀ 02578338	ՀՀ 205002202385
ՀՀ 900011025823	
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/

Հաստատված է
N ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/8Շ գնման պայմանագրի
«16» հոկտեմբերի 2019թ. կնքված
Թիվ 1 Համաձայնագրով
Հավելված թիվ 1

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Մ-4, Երևան – Սևան – Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ129+100 – կմ135+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքների

(ՀՀ դրամ)

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Գնման ենթակա աշխատանքների անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1	45231177/71	Մ-4, Երևան – Սևան – Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ129+100 – կմ135+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ										759000000	759000000	759000000	759000000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
ՀՀ 900011025823

/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ
«ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ
Արարատի մարզ, գյուղ Ավշար
«Ինեկոբանկ» ՓԲԸ «Կորյուն» մ/ճ
ՀՎՀՀ 04102505
ՀՀ 205002202385

/ստորագրություն/